

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Պուլկարիոյ համար
Տարեկան ֆր. 10
Վեցամսեայ » 5
ԿԱՆԽԻԿ

20
ՍԱՆԴԻՍ



ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Արտասահման
Տարեկան ֆրանք 12
Վեցամսեայ » 6
ԿԱՆԽԻԿ

20
ՍԱՆԴԻՍ

ՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԽԵՇՏԱԿԱՆ

Կը հրատարակուի Շաբաթ օրերը: Ծա-
նուցման տողը 10 Սանդիս: Երու ք/ու ա-
ռայ հրատարակուած քերքը 40 Սանդիս:
Զհրատարակուած գրու քիւնը եւ յտուիր:

Հասցե
DIRAN PAPA ZIAN
RUE DRAGOMAN K. STEPAN
(BULGARIE) VARNA



Ծխողը. — Անպիտան սիկառ, երած յարգ
կը հօտի կոր:

Բոժոժիկ. — Վա՛յ. ապուշ, վա՛յ:

ԱԶԳԱՅԻՆ

Կ. ՊՈԼԻՍԷՆ ՎԵՐԱԴԱՐԶ

Ասկէ 15 օր առաջ քաղաքէս 'ի Պոլիս
վերադարձած էին 25 երկսեռ գաղթականք,
ԿԵՆՈՐԱԼԻՈՐ ԱՆՑԱԳՐՈՎ: Կանայք ու տղայք
ազատ թողուելէ ետքը մնացեալ 9 էրիկ մար-
դիկ ուղղակի կեդրոնական բանտը կ'առաջ-
նորդուին. ուր 11 օր բանտարկուելէ վերջը
կ'որոշուի զիրենք Վառնա վերադարձնել. վա-

սըն զի սա մե՛ծ ու անբաւելի յանցանքը ունին
եղեր որ՝ յեղափոխականներու անուններ չեն
կրցեր տալու: Ընթերցողաց տարօրինակ չը
թուի այս ճշմարտութիւնը զի եթէ այդ մար-
դիկը ուրիշ յանցանք մը ունենային՝ բան-
տին մէջ վար կը դրուէին: Հետեաբար անց-
եալ հինգշաբթի Վառնա հասնող Աւստ-
րիականով վերոյիշեալ 9 անձինք, որոց ճամ-
բու ծախքը թուրք կառավարութիւնը հոգա-
ցած էր, վերադարձան, իսկ ընտանիքներին
վար դրուեցան 'ի Պոլիս:

Վերադարձողներուն խոստովանութեանը
նայելով, հարցաքննիչ դատաւորը ըսեր է որ
«մենք ի՞նչ կրնանք ընել. թէեւ դուք ան-
մեղ էք, բայց ձեր հետը ճամբայ հանուած
տեղեկագիրներ զձեզ յանցաւոր կը յայտա-
բարեն, ուստի պարտաւոր ենք աւելի անոնց
հետաւորալ բան թէ ձեզիդ:

Ասկէ 2 ամիս առաջ 'ի Պոլիս վերա-
դարձողներէն շատեր տակաւին բանտարկուած
են եղեր ու զղջացեր են երթալնուն. ասոնք
'ի սկզբան կարծեր են թէ 10—15 օր բան-
տարկուելէ ետքը պիտի արձակուին, բայց ա-
միսներ կանցնին ու տակաւին իրենք բանտար-
կուած կը մնան առանց հարցնող փնտռող մը
ունենալու, ու դուրսը, ընտանիքներին ալ
չ.բաւարարութենէ կը տանջուին:

Վերադարձողներէ մին, որ մեր բարեկամներէն է, բանտին մէջ, իրմէ ետքը բանտարկուող Պոլսեցի հայէ մը իմացեր է որ, դուրսը, օրը 40 փարայ շահող մը մատով կը ցուցնեն, թէ հայերը սրճարան կամ զբօսարան մը չի համալձակելով նստիլ, ուղղակի տուններնին կերթան, ճամբան առանց մէկուն հետ խօսիլ յանդգնելու: Տուններու մէջ իսկ բարձրաձայն խօսիլը ու երգելը (ինչ լեզուէ որ ըլլայ) արգիլեալ է:

Պատրիարքը յուսահատած է եղեր. վասն զի ամեն օր հարիւրաւոր կնիկներ Պատրիարքարան կը լեցունին, կուլան կ'ողբան, անոթի ենք կը պոռնան ու իրենց բանտարկեալ ամուսիններուն ազատութիւնը կը խնդրեն: Օրմանեան վերջապէս ճարահատեալ յայտարարեր է որ՝ «Ի՞նչ կրնամ ընել, ինձի խոստացածնուն միշտ հակառակը կը դործեն կոր»:

Աին մը — Բան մը չես կրնար ընել նէ ինչո՞ւ հոգ նստեր ես. — ըսեր է:

„„

Նաբօլէոնը 95 զրշի հաշուով հացին քիւլօն 55 փարայի, ածուխը 25 փարայի, միսին քիւլօն 7 զրշի, սուրճը 9 զրշի ու շաքարը 110 փարայի կը ծախուին եղեր:

Տեղւոյս Աղքատախնամ Ընկերութիւնը շնորհակալութեամբ կը ծանուցանէ որ, Եւե. Տեար Խաչիկ Տամատեանի ձեռամբ 60 Փր. արծաթ ստացած է, արգիւնք Պալչըգի Պատ. Ազգայնոց կողմէ եղած հանգանակութեան:

ԱՄԻՐԻԱՆԵԱՆՑ ԱՐՀԵՍՏԱՆՈՑ

Պ. Ամիրխանեանց, որ չքաւոր դաղթականուհիներու համար արհեստանոց մը բացած էր, որոց թէ՛ ցորեկուան եւ թէ՛ իրիկուան ճաշն ալ կու տար, տեսնելով որ այս չքաւոր՝ բայց բարի—ծաղիկուհիք սկսած են

արհեստանոցին գործիքները թռցնել, անցած շաբթու ամենքն ալ ճամբեր ու արհեստանոցը գոցեր է:

Երեսնին ճերմակ կենայ:

Նամակ առ Խմբագրութիւն

Վառնա, 12 Նոյ.

... Խմբագիր Հայկելի Ազգօգուտ Հանդիսի.

Երեք շաբթներէ ի վեր առևտրական գործերուս պատճառաւ Պալչըգէն Վառնա եկած եմ: Ասկէ 15 օր առաջիւղ հիւսիսային սաստիկ քամին վերջին օրը դիպուածով հիւանդանոցի կողմերը քարի ու հետաքրքրութենէս՝ նոյն յարկին դռնէն ներս մտայ: Ի՞նչ տեսնեմ աղէկ, դաղթական կին մը ցուրտէն սառած ըլլալով, անոր յուղարկաւորութեան պատրաստութիւնը կը տեսնէին: Շատ սրտածմլիկ էր տեսարանը, հոն տեսայ ընտանիքներ, որոնք վերմակներու և բուրձերու փաթեթաւ՝ ցուրտէն կը սարսըռային:

Ըստ իմ կարողութեան, անոնց մէկ երկուքին օգնելու պէս ընելէս ետքը, տիրութեամբ մեկնեցայ այդ յարկէն, ու դուրսը իմացայ որ տեղւոյս Աղքատախնամը այդ թշուառաց պատսպարանը տաք պահելու նըպատակաւ մտադիր է փայտի համար հանգանակութեան մը ձեռնարկել:

Շատ ուրախ եղայ Աղքատախնամի տրւած սոյն որոշման համար. սակայն տնկէ ի վեր երկու շաբթներ անցան ու տակաւին հանգանակութեան վրայօք բան մը չիմացանք, այն հանգանակութեան, որուն պիտի մասնակցէր անշուշտ ամեն զգայուն Հայ:

Արդ, ներկայիս կոչում կընեմ Աղքատախնամի Գործադիր անդամոց մարդասիրութեանը, որպէս զի թոյլ չի վարուին, ու մէկ երկու օրէ ի վեր եղած այս գեղեցիկ օգերուն յաջորդելիք սոսկալի ձևերը մտաբե-

րելով հանգանակութեան նշեն ու գոնէ քիչ մը փայտ ամբարենն:

Հաճեցէք Տէր Խմբագիր, ներկայս Ձեր անկողմնակալ թերթին մէջ հիւրընկալել, առ այս ընդունելով մեր շնորհակալիքը:

Մամբ բարեացակամ
ԱՐԱՅ ՏԻԳՐԱՆԵԱՆ

Վառնա 13 Նոյ.

Խմբագիր Տէր,

Ձեր անկողմնակալ թերթին միջոցաւ կը հարցնենք թէ,

Ա. երկու ազգայինք, որոնց մին կոշկակար և միւսը նպարավաճառ, ասկէ առաջ լրագրաց միջոցաւ հրատարակուած ազդերով խոստացած էին իրենց ընելիք առուտուրէն հարիւրին բան մը վճարել տեղւոյս Աղբատան մին. արդեօք այդ անձինքը մինչև հիմա իրենց խոստումը կատարած են:

Բ. Հայկական զինանշանով 5—6 ամիսներէ ի վեր Վառնայի հրապարակին վրայ ծախուած սիկարի թուղթին շահէն 100ին 25ը տեղւոյս ազգային վարժարանին տալ խօստացուած էր. արդեօք մինչև ցարդ այդ խօստումն ալ կատարուած է:

Երեմ Ստորագրութիւնք

Հայելի

Առաջնոյն պատասխանը Աղբատաննամէն, երկրորդինն ալ Պատ. Թաղ. Խորհուրդէն առնելով՝ կը խօստանանք յաջորդ թերթով հրատարակել:

Անցեալ կիրակի օրը գումարուած Սիսական ընկերութեան Ընդհ. Ժողովը՝ Վարչական Ժողով մը ընտրած էր. բայց ասոնք ամբողջովին հրաժարած ըլլալուն՝ կը հրաւիրուի ընթերցասէր հասարակութիւնը վաղը կիրակի (նոյ 16) վերստին հաւաքուելով ընտրել նոր Վարչութիւն մը:

Նոյ. 6 Թուականով Վիտինէն կը գրեն մեզ:

«Սոփիաի նախկին քահանայ տէր Արապետ Սահակեան Թուականէս քանի մը շաբաթներ առաջ այցելած է ի Վիտին, Սոփիաի վարժարանին ի նպաստ դրամ հաւաքելու պատրուակաւ: Սակայն իր այս պաշտօնը վաւերացնող պաշտօնական եւ ոչ մէկ գրութիւն չունենալէն, հազիւ յաջողեր է 15—20 ֆրանք շորթել միամիտներէ:

«Նոյն օրեր, Վիտինաբնակ Հայերէն մէկուն որդւոյն մահուան տարեգարծն ըլլալով, մատաղ կտրուած է, ուստի քահանային ներկայութիւնը անհրաժեշտ համարուելով, տէր Արապետ հրաւիրուած է:

«Ս» հանդէսը կը բանայ «Հայր մեր»-ով մը, ու դինին շատեկի միջոցով, հանդէսը փոխանակ «Պահպանիչ»ի ԱՏԱՄՄ աւանդներով կը վերջացնէ:

Բոժ. — Աբստօլին Խօլթո՛ւն էիր, տէր պապա՛:


” ”

«Գալով փեսացու (.) տէր Ղեւոնդին, այժմ քաղքէ քաղաք կը շրջի եւ իրեն կնուլթեան առնելու համար աղջիկ կը փնտռէ, առարկելով որ իր գտնուած քաղաքի հայ ժողովուրդը նախապաշարեալ է, հին օրէնքին տկան չի կախեր, եւ իբր թէ կը պընդեն եղեր որ առանց երէցիկին զինքը չեն ուղեր: Բարեբախտաբար իր այս սուտերով նպատակին չի հասած, միշտ եկած տեղը կը վերադառնայ: Կը կարծուի թէ տէր Ղեւոնդի այս ընթացքը մտային բոլորքման հետեանք է: »

ՀՈՒՐ


ԳՈՐԾԱԽՈՐԱՅ ՀԱՄԱՐ

Կ'ուզէք աժան ճաշ մը ընել, դիմեցէք հօթել Տօպրիչ, Գրիգոր Բիւչիւքեանի ճաշարանը, համադամ կերակուրներ պիտի գտնէ, ործաւորի քսակին յարմար:



ԻԱԲՈՒԱԾ ԱԿՆՑԻՆ

(ԻՐԱԿԱՆ ԴԵՊԲ Ի Կ. ՊՈԼԻՍ)



ԳԼՈՒԽ Զ.

ԱՆԱԿՆԿԱԼ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Յայտնի է որ, Շիրքէթի Խայրիէի շոգենաները կամուրջէն մեկնելով՝ մինչև Սալը—Բազար ցամաքին մօտէն կընթանան, անկէ ետքը իրենց պէտք եղած ուղղութիւնը կ'առնեն:

Մեր Աստիւր աղայն, զոր յիմնանին գէպ'ի շոգենաւին գլխու կողմը, հովին դէմ տարեր նստեցուցեր էր, կամաց կամաց ըսկաւ սթափիլ, ու տեսնելով որ շոգենաւը իր ուղղութիւնը դէպ'ի Իւսկիւտար կը դարձունէ, աջ կողմը նստող ու լրագիր կարգալով զբաղած հայ երիտասարդի մը հարցուց.

— Պարոն աղա, ի՞նչ միւճիկով բամբուրին քինթը դարձաւ:

Երիտասարդը այնչափ զբաղած էր, որ չի լսեց այս հարցումը:

— Քեզի կըսիմ պարոն աղա, կրկնեց, զայն քիչ մը հրելով, ի՞նչ միւճիկով բամբուրին քինթը դարձաւ:

— Որովհետեւ Իւսկիւտար պիտի երթայ, պատասխանեց երիտասարդը, առանց սակայն աչքերը լրագրին վրայն վերցնելու:

— Իւսկիւտար մի՞... պոռաց Աստիւր աղայն բարկացած, աչքերը խոշորցնելով:

— Այո՛, Իւսկիւտար, կրկնեց երիտասարդը, անոր ձայնէն զարմանահար:

— Ի՞նչ կըսիս պարոն աղա, մենք մայթապի մարդ չինք, խօնթօխօրօնթօ չինք ուտիր, կու հասկնամ:

Այս անգամ պարոնը անոր երեսը նայեցաւ ու զարմանօք գոչեց:

— Վայ, Աստիւր աղա, դուն ես ասանկ ո՛ւր բարով:

— Պէլի, ես եիմ. ան է ուր անունս գինցար՝ վախնամ իրսում ասրապա տ'ելլանք. բամբանքդ ո՞վ ես:

Ու խօսակիցը ճանչնալու համար տեղէն ելնելով՝ անոր վրայ իյնալու պէս կընէր:

— Պարապ տեղը յոգնութիւն մի՛ առնեք, ըսաւ երիտասարդը, հանդարտէ. ես քու խանութիդ գրացի Միհրան աղային գրագիրը, Պատրիկը չեմ:

— Պատկերը՞ մի, գոչեց Աստիւր աղա, գարեջուրին ազդեցութենէն խանգարուած յիշողութիւնը ամփոփել ջանալով:

— Ամեն օրուան տեսած մարդդ:

— Վայ, իշթէ հըմայեկս բանս բուրդէղաւ, մրմուց Աստիւր աղա, ձեռքը ձունգին զարնելով:

— Ձի հասկցայ, ի՞նչ ըսիք:

— Բամբանքնիդ ո՛ւր կու նուստիք:

— Իւսկիւտար:

— Իւսկիւտար... էյ հըմայեկս ծիտաէն ֆէօն տի երթանք:

— Ուրիշ տեղ չի հանդարտ այս շոգենաւը:

— Վայ ծիտդ տակդ մունա կաթնափեր Մաթոս. ինծի տուպառա, հէ՛:

— Կ'երեւի թէ կատակ մը ըրեր ես ձեզի, Իւսկիւտարի շոգենաւին համար Գուրու Չէշմէինն է ըսելով: Հոգ չէ, ասանկ բաներ շատերուն կը պատահի:

— Թա՛մ գիլուն զարկիր Պատկեր աղա. Մաթոս էմմին ծառայականս Ղալաթա եախասին բիրախանան տարեր էր, ֆէօն քըչէյ մի քաղաքը տունը իսէ նը՝ բամբուրով գնալն մինասիպ սեպեցանք, անձախ տուպարայով ֆէօս ինկինք:

— Հոգ չէ, ճամբորդութիւն մը ըրած կըլլաք մինչեւ Իւսկիւտար:

— Աղէկ ըմմա, Գուրու Չէշմէ ինտո՞ր տի երթանք:

— Եթէ այս շոգենաւով կամուրջ վերադառնաք, չէք կրնար Գուրու Չէշմէ վերջին շոգենաւին հասնիլ. ուստի Իւսկիւտարէն նաւակ մը կը վարձենք, որ զձեզ դիմացի կողմը կ'անցունէ:

— Հիսս արած մէջնունիլէթս պէյան անելու ածիզ եիմ. աս ըրածնիդ մե՞ծ ալի- ճէնապուլթին մի է :

— Բան մը չէ, պորտքերնիս է :

— Ընձախ, բամբակնիդ իրիճա մի ունիմ :

— Ի՞նչպէս :

— Պինտ էռաջ խպպուլ ընելուդ հը- մար նամուս տարիէսին խօսք տի տաս :

— Բայց ի՞նչպէս խօսք տամ, թերեւս անկարելի բան մ'է :

— Վախիտէ անկարեա բան մի է ըմ- մա՝ ալիճէնապուլթին մի է :

— Սակայն . . .

— Կեցիր ուր ըսիմ. (Բերանը անոր ա- կանջին մօտեցուցած՝ կամաց մը) Ծառայակա- նիս բիրախանա գնալս վէ տուպառայով կաղ- նըջ բամբօր նստիլս չի տի իմացնես Միհրան աղային : Էկէր իմացնիս իսէ՝ գուլլի վարա- ղիս մուճիպ տըլլիս :

— Ըստ աղէկ, չեմ իմացներ, ըսաւ. Պատրիկ այս առաջարկին վրայ վարմանալով, սւ վայրկեան մը մտածելէն ետքը յարեց, Միհրան աղային իմանալէն ի՞նչ կելլայ :

— Էֆէնտըմ, ադ խուսուսը մեր գին- նալիք բանն է. հիշ պօշ տեղը ղէյնըդ տէ- տիւրկիւն մի անիր. մէկ էրկու օրէն մօտ- տէին տիպաճաէն մուխուֆ տըլլիս :

Պատրիկ, որուն վարմանքը էրթալով շատ- ցած էր քանի մը վայրկեան մտածելէ ետքը յանկարծ միտքը նոր խորհուրդ մը իյնալով ինքնիմենը ըսաւ. « Բու այդ գաղտնիքէդ պի- տի օգտուի՞նք » :

— Էյ ի՞նչ կըսիս աղա .

— Կը խոստանամ մէկու մը չիմացնել :

— Հաւատքիդ վրայ էրգում կընի՞ս .

— Պատուոյս վրայ :

— Հա՛, սանկ ըսէ, պինաէնալէյհ, ֆօ- քիս ըռահաթցաւ :

Ջանց կընենք Աստիւր աղային նոյն օ- րուան գինովութենէն ինքզինքը արդարաց- նելու համար ըրած ճիգերը ու շաղկրատու- թիւնները նկարագրել, որոնք մինչև Իսկիւ-

տարի նաւամատոյցը տեւեցին, նոյնպէս աւե- լորդ կը համարինք նկարագրել Պատրիկի զարմանքն ու մտատանջութիւնը, ի մասին Աստիւր աղայի այս աստիճան բռնկելուն :

Տասը վայրկեանէն շոգինաւը Իսկիւ- տարի նաւամատոյցը հասած էր :

Պատրիկ 10 դահեկանի երկզուգաթի նաւակ մը վարձելով Աստիւր աղայն մէջը նըս- տեցուց ու ճամբու գրաւ :

Նաւակը մինչև որ Գուրու Չէշմէի նա- լահանգիստը հասաւ՝ Աստիւր աղայն եղած այս անտեղութեան վրայ մտածելով ինքզինքը կուտէր, կ'անհիճէր Մաթոս աղայն՝ որուն պատ- ճառաւ իր երազները վտանգուած կը կար- ծէր : Աւ երբ նաւակին 10 դահեկան վարձ- քը վճարելու վայրկեանը հասաւ, ալ աւելի բարկացաւ ընկերոջը դէմ, որուն շնորհիւ սոյն գումարը կը տուժէր :

Նոյն գիշերը մինչև իւր բնակարանը ինք- նիրենը բարկութեամբ խօսելով երթալը տես- նոյնը կային :

Շար .

Գիւղի մը քահանան իր հիւանդ մահա- մարձ ծուխերէն միոյն սնարին քով կը փու- թայ :

Անցողակի յայտնենք թէ եկեղեցւոյ այս պաշտօնեան ալ աշխարհային բաղմագիմի փորձութիւններու բոլորովին դէմ գնող մը չ'էր. և ուսերուն վրայ ինչ ինչ տարածայ- նութեանց բեռը կը կրէր :

Հիւանդն ևս անառակ և ցոյի կեանք մը վարած էր մինչև այն տտեն և իր առող- ջութիւնը քանդած էր ծայրայեղ գինեմուլու- թեամբ :

Այն պէս որ հովիւ ու ոչխար կատա- րելապէս արժանի էին իրարու :

— Արգեակ, ըսաւ քահանան, երբ պի- տի ղգաստանաս, ե՞րբ պիտի դադրիս այդքան խմելէ, ե՞րբ վերջապէս խելքդ գլխիդ պի- տի բերես :

— Երբէք, տէր հայր, սկզբունքի տէր

եմ՝ ես հետևաբար միշտ պիտի խմեմ. գէթ որքան որ դրամս չի պակսի :

— Բայց չ'ես գիտեր որ դժողքը քեզի պէսներուն համար ստեղծուած է :

— Երազ մը տեսայ տէր հայր, ընդմիջեց հիւանդը :

— Խեր ըլլայ :

— Ըլլայ թէ չ'է. մտիկ ըրէք: Դժողքին խորերը եղած էի. բոցեր, ահաւելի ժըխորներ զիս կը պաշարէին. պոչաւոր և եղջերաւոր սատանաներ երեքժանին երերցնելով կը պառնային ինծի: Յոգնած էի. ոտքի վրայ կենալու կարողութիւնս չ'էր մնացեր: Խոշոր աթոռ մը կար դժողքին ճիշդ մէջ տեղը. մօտեցայ որ վայրկեան մը հանգչիմ:

Բայց նոյն պահուն հրեղէն աչքերով ատանայապետը վրաս խուժեց :

— Մի՛ մօտենար աթոռին, ամբարիշտ, պօռաց սատանան. բուկդ չ'է. գիւղիդ քահանային կ'ըստես այս աթոռը . . . :

Հիւանդը աչքերը գոցեց. իսկ դժողքուն քահանան դուռը բանալով անյետացաւ :



Ը Ն Տ Ա Ն Ե Կ Ա Ն

ՀԱԿԱՊԱՏԵՐ

„Պատուեա՛ զհայր իոյ”ի

Անցեալ երկուշաբթի առաւօտ երկու գրացուհիք կը խօսակցէին այսպէս .

— Քա ճանըմ՝ Մարինոս հանըմ՝, երէկ գիշեր բովի տուններնուդ մէջ ան ի՞նչ բաթըռտը էր :

— Սուս եղիր, բուրուկ, սուս եղիր, մեր սիրտը պիտի խշխշաց: Երկու աղջիկները մօրերնուն հետ մէկ ելան՝ աստար տարուան ծերուկ հայրերնին էօլէսիէ ծեծեցին: Զավալլը մարդը “Շիմտի կէօթտէն թաշ եաղաճագ”

կըսէր ու տղոցը անունները տալով “իմտատ” կը պօռար :

— Ըսել է որ տղաքը հոն չէին :

— Դուրս ելեր էին :


— Էյ ագ ծեծին սէպէպը ի՞նչ էր :

— Զավալլը մարդը արթըրա տարիքը առած ըլլալէն չի կրնար կոր եղեր աշխատիլ, աչքն ալ չի ղօրեր եղեր. աստար տարի վաստկածը անոնց կերցուցեր ան պօյը բերեր է. Ֆախտթ աղջիկները մտիկ չ'են ըներ աշխատիս պիտի ըսելով կը ծեծեն կոր :

— Քա ատ ի՞նչ շիրին զաւակներ են եղեր :

— Սուս եղիր, բուրուկ, վրանուն նայիս նէ՛ բէք հոսմուկ բաներ են կըսես :

— Հըմուկութիւննին վար անցնի. ինտանըն ալաճասը իչէրտէ տիր, կըսեն նէ՛ իրաւ է եղեր :



Քարողիչ մը որոտաճայն կը գոչէր .

— Սիրելի ժողովուրդ, ո՛ւր գնե՞ք Լուսաւորիչը — Ըռաքելոց մէջ . — Զըլլար. առաքեալներէն ալ վեր է, քանի որ անոնցմէ աւելի հրաշքներ գործեց : — Մարգարէից մէջ . — Զըլլար, քանի որ մարգարէներէն աւելի մարգարէացաւ : — Մարտիրոսաց մէջ . — Զըլլար, քանի որ մարտիրոսներէն աւելի չարչարուեցաւ : — Ուրեմն Լուսաւորիչը արբայութեան ո՞ր կարգին մէջ գնելու ենք :

Ունկնդիրներէն մէկը տաղտկանալով այս բարոյէն, կը գոչէ, “ Հայր սուրբ, ահա ես կը մեկնիմ. բեր իմ տեղս դիր : ”

Բժշկական հարցաքննութեան մը մէջ .

— Կարմրախտէն (հիւսմա) բռնուած հիւանդը քրտնցնելու համար ի՞նչ դեղ պիտի տաս :

— Ոտքերը տաք ջուրը դնել տալով « Ըհլամուր » կը խմցունեմ :

— Բայց եթէ ատով չի քրտնի . . .

— Կրնալին « Սպիրթօ տի բամֆօրա » քսել կուտամ :

— Ըսենք թէ դարձեալ չի քրտնեցալ :

— Կալուններով տաք ջուր դնել կուտամ անկողինին մէջ :

— Դիցուք թէ ատով ալ չի քրտնեցալ :

— Այն ատեն հիւանդը հոս փոխադրել տալով ձեր քննութեանը կենթարկեմ , որով անպատճառ պիտի քրտնի . . . ինծի պէս :

— 0 —

Ի Բարիկ ոստիկանութեան պաշտօնակալ մը իր ստորակարգելոյն կը հարցնէ .

— Երէկ իրիկուն Շանգ—Էլիզէի կողմերը տան մը մէջ մարդ մը կողպտեր եւ ըսպաններ են , ուսկից կը յուսաս այս .

— Ա՛յ . . . յանցաւորը անպատճառ բժիշկ մը ըլլալու է , որ թէ՛ ստակը տներն է թէ խեղճ՝ մարդն սպաններ է :

— 0 —

Գիշերօթիկ վարժարանի մը մէջ կրթական տեսուչը վառվռուն ուսանողի մը կը հարցընէ .

— Ուտեստներէն գո՛հ էք .

— Այո՛ պարոն :


— Կերակուրները հաւասար կը բաժնեն ձեզի .

— Ի՞նչպէս . . .

— Չի՞ պատահիր երբեմն որ ձեր մէջէն մէկը մեծ բաժին մը առնէ եւ ուրիշ մը պղտիկ .

— Երբէք , պարոն , արդէն բոլոր բաժինները պղտիկ են :

ՆԿԱՐՀԱՆՈՒԿ ԹԻՒ 7



ան
սգ

ան
սգ



ան
սգ

ան
սգ

ան
սգ

Պարգէն է Գուշակ Ապագայի անուն գիրք մը :

Վայրկեւական Տպագրութիւն

Ա Յ Յ Ե Տ Ո Մ Ս Ի

100 հատը 2 ֆր. ի կը տպագրուի եւ անոր տուփին մէջ կը գտնուի Այցետոմսի գործածութեան հրահանգը պարունակող տետրակ մը , որուն կողքին վրայ այցետոմսին տիրոջ անունը տպագրուած պիտի ըլլայ : Դիմել խմբագրութեան : Քաղաքներէ ըլլալիք յանձնարարութեան թղթատարի ֆախք 30 սանդիմը յաւանարարողին վրայ է : Դրամի փոխարէն Պուլկարական 5, 10 եւ 15 սանդիմնոց նամակադրօջմ կ'ընդունուի : Կանխիկ :



ԱՐՄԵՆԱԿ ԳԱԼԵՄՃԵԱՆ

Արդկող (Իւթիւ գօլա)

Եւրոպայէ բերել տուած նոր գործիքներով շապիկ ,

թւնոց , վզնոց , կանանց միսօներ եւ այլ ճերմակեղէններ կ'արդուէ , անանկ որ՝ նորէն զանազանելը անհնարին է : Գին գոհացուցիչ :

Դիմել Մուսալլա Պ . Ա . Զարպհանէլեանի խանութը :

Ա Ձ Դ

ՄԵՔԵՆԱՅԻՑ ԳՈՐԾԱՐԱՆ
և Յուրաքանչեւ

(ՊՈՒԼԵԱՐԻԱ)

Գ. Յ. ԲԱՐԹԱՄԵԱՆ և Բ. Է. ԲՆԱԶՈՒՓ

Վառնա Ծրդ թաղ երկտղ թապիս

Ամէն տեսակ մեքենաներու շինութիւն և նորոգութիւն, ջաղացքի թէ՛ շոգիով և թէ՛ պարզ ջուրով գործող մեքենաներ, նաև շոգեմակոյկներ, ջաղացքի վերաբերեալ ամէն տեսակ երկաթայ գործիքներ, գրամական գասաներ, շէնքերու յատուկ երկաթեղէններ, տեսակ տեսակ ջրհաններ և այլն և այլն կը պատրաստուին Պատ. Յաճախորդք միշտ գոհ մնացած են սոյն գործարանի շինութիւններէն:

ԼԵՒՈՆ ԱՃԷՄԵԱՆ

Ոսկերիչ - փորագրիչ



Ոսկի, արծաթ և ուրիշ ամեն տեսակ մետաղէ տուփերու ժամացոյցներու, բօրդ մէններու և մատանիներու թէ՛ վրան և

թէ՛ մէջը Մօնէկրաւ և Անսոյաւ մարգաններ ու գիրեր փորագրող, ամեն լեզուէ թէ՛ անձնական և թէ՛ վաճառականական կրօնիքներ պատրաստող, նաև ոսկերչութեան վերաբերեալ ամեն տեսակ գործեր կը շինէ: Դիմել ի վարնա, Ուլիցա թունանցքա Տիար Տիգրան Գալֆանի խանութը, թիւ 310

ԳՈՒՀԱԿ
Ա. Պ. Ա. Գ. Ա. Յ. ԻԿամ Զուարճալի Բաղդացոյց
Ընտանեկան

Երկսեւ ամէն հասակի ընթերցողաց ըզբօսալի ժամանցներ տուող սոյն գիրքը կը ծախուի մէկ ֆրանքի, թղթատարի ծախքով, դիմել միւր խմբագրութեան:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԵՐԳԱՐԱՆ
ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶԻ

ԿԱՄ

ԴԱՍԱԳԻՐԲ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ

Ի ՊԵՏՍ

ՓՈՔՐԻՆ ՏՂԱՅՈՅ

Այս երգարանը, իր տեսակին մէջ առաջինն է որ լոյս կը տեսնէ հայերէն լեզուով, կը պարունակէ մանկական զուարճալի երգեր ու քանի մը ոտանաւոր առակներ և կրնայ երախայներուն ծառայել նաև իբր ընթերցանութեան գիրք որուն պարունակութիւնը զբօսեցուցիչ և հրահանգիչ է միանգամայն անոնց համար:

Թուղթը ընտիր է, տպագրութիւնը՝ մաքուր և կազմը վայելուչ:

Գին 80 ՍԱՆԹԻՄ

Կեդրոն. Վառնա, Արեւելեան տպարան,
Զրդ. թաղ, թիւ 1104:

ԿԱՆՎԱՆԻՍԹ

Ամեն տեսակ

տպագրական կա-

ղապարներ պատրաստող, նաև անձնական և թէ՛ առևտրական կնիքներ: Սոյն կնիքները որ ըստ վերջին դրութեան պղինձէ կը շինուին, հրապարակի վրայ երեցած քառաչուէ կնիքներէ աւելի դիմացկուն են և դիւրութեամբ կը տպագրուին. գինն ալ քառաչուի գինէն տարբերութիւն չունի: Քաղաքներէ ըլլալիք յանձնարարութիւնք փութով կը կատարուին: Դիմել ի վառնա Զիլինկիլէր փողոց թիւ 561: Գին գոհացուցիչ:



Отговоренъ редакторъ: Н. Драгулевъ
Печнатица «Вз а им н о с т ь» — Варна.